

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈԳՐԵՍԻ ՈՒՂԻՌՎ

### Ս. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հայկական ՍՍՈՒ Ժողովականի նախագահի տեղակալ

Արտադրական պրոցեսների մեքենայացումն ու ավտոմատացումը հանդիսանում են արդյունաբերության բոլոր ճյուղերի տեխնիկական պրոդրեսի կարևորագույն ուղղությունները։ Արտադրության կազմակերպումը կատարելագործելու, արտադրական պրոցեսները մեքենայացնելու և արմատավորելու հաշվին անընդհատ աճում է աշխատանքի արտադրողականությունը։

Տեխնիկական պրոգրեսն արագացնելու համար նոր պայմաններ ստեղծվեցին արդյունաբերության կառավարումը վերակառուցելու շնորհիվ։ Ժողովրդական տնտեսության խորհուրդներին արդյունաբերական կառավարման հանձնումը բարենպաստ պայմաններ ստեղծեց նոր մեքենաները, տեխնիկական պայմաններն ու շինչվածքները ավելի արագորեն յուրացնելու, տնտեսական շրջանի ներսում գործող զանազան ճյուղերի ձեռնարկությունների աշխատանքը կոռորդինացնելու հարցերը հաջողությամբ լուծելու համար։

Հենասագործելով պարտիայի ՀՀ համագումարի որոշումները, Հայկական տնտեսական վարչական շրջանի արդյունաբերական ձեռնարկություններից շատերի կոլեկտիվները որոշ հաջողությունների են հասել նոր տեխնիկայի արմատավորման համար մղած պայքարում։

Քննության առնենք ուսապուրիկայի Ժողովը խորհի արդյունաբերության մի շարք կարևորագույն ճյուղերում տեխնիկական պրոգրեսի բնագավառում ձեռք բերված մի քանի հիմնական նվազումները։

Արտադրական պրոցեսների ավտոմատացումն իրագործելու համար առավել նպաստավոր պայմաններ կան էներգետիկ վարչության և քիմիական արդյունաբերության ձեռնարկություններ։

րում, որտեղ արտադրական պրոցեսներն ավելի լավ են հարմարեցված ինչպես մասնակի, այնպես էլ կոմպլեքսային ավտոմատացման համար։ Այստեղ կան պատրաստված կադրեր և համեմատաբար լավ սարքավորված լաբորատորիաներ ու ցեխեր՝ վերահսկիչ-շափիչ ապարատների և ավտոմատների սպասարկման ու մոնիթորինգային համար։

Էներգետիկ վարչության կենտրոնական էլեկտրատեխնիկական լաբորատորիան մեծ աշխատանք է տանում էներգետիկ սիստեմի ռացիոնալ սիստեմաների մշակման ու արմատավորման, ինչպես նաև ավտոմատացման ուղղությամբ։ Արդյունու հիգրոէլեկտրակայանում իրագործվել է օրական կարգավորման ավազանի վահանների դիստանցիոն կառավարումը, ինչպես նաև Գյումուշի հիգրոէլեկտրակայանի ռեակտիվ կարողության խմբային կարգավորումը։ Կասկադի կայանների դիստանցիոն կառավարումը տեղի է ունենում կենտրոնական դիսպեչերական կետից։ Աշխատանք է տարվում նաև Երևանի քաղաքային ենթակայանը տելեմեխանիֆացիայի ենթարկելու ուղղությամբ։ Նախապատրաստվում է Զորագէսը տնային հերթափոխության փոխադրելու համար։

Պոլիմերացման զերմաստիճանի կարգավորման ավտոմատացումը, որն իրագործել են Ս. Մ. Կիրովի անվան գործարանի վերահսկիչ-շափիչ գործիքների ցեխի տեխնոլոգիները, Ավտոմատիկայի գիտա-հետազոտական ինստիտուտի հետ համատեղ, հնարավորություն տվեց վերացնելու ռեժիմների խախտումը պոլիմերացման պրոցեսում և ապահովելու բարձր որակի համասեռ արտադրանքի թողարկումը։ Գործարանի մի շարք ցեխերում արդեն մոնտաժվել ու շահագործման

Են հանձնվել կառավարման և վերահսկման կենտրոնացված խցիկներ, որը զգալի շափով հեշտացնում է արտադրական պրոցեսների կառավարումը:

Գործարանի կենտրոնական գիտա-հետազոտական լաբորատորիայում, Կառլշուկի համամիութենական ինստիտուտի համագործակցությամբ, մշակվել ու արտադրության մեջ արմատավորվել է ցածր ջերմաստիճանային նախրիտը, որը փոխարինել է կոշիկի արտադրության համար արտասահմանից ՍՍՌՄ ներմուծվող գուտապերչին և ժողովրդական տնտեսության մեջ լայնորեն կիրառվող մի շարք լատեքսներին:

Գունավոր մետաղների արտադրության աճումը տեղի է ունենում ոչ միայն նոր ձեռնարկությունների կառուցման հաշվին, այլև արտադրական կարողությունների լավագույն օգտագործման, արտադրության մեքենայացման ու ավտոմատացման և տեխնոլոգիական պրոցեսների բարելավման հաշվին:

Քաջարանի կոմբինատում հանքաքարի ստուբկրյա հանույթից բաց հանույթին անցնելը զգալիորեն բարելավել է աշխատանքի պայմանները, երկու անգամ իշեցրել է արտադրանքի ինքնարժեքը և բարձրացրել աշխատանքի արտադրողականությունը: Այդ անցումը հնարավորություն է տվել օգտագործելու ավելի ժամանակակից ու բարձր արտադրողական մեխանիզմներ և մինիմումի հասցնել ձեռքի աշխատանքի կիրառումը:

Լեռնահանքային արդյունաբերության մի քանի ձեռնարկություններում մեքենայացվել են հանքաքարի փոխադրման պրոցեսները, արմատավորվել է հանույթի նոր սիստեմ՝ խորքաձողային հորատման կիրառությամբ:

Մեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկությունները, գիտա-հետազոտական ինստիտուտները, կոնստրուկտորական բաժինները, Էլեկտրատեխնիկական արդյունաբերության կենտրոնական գործարանային գիտա-հետազոտական լաբորատորիաները, միութենական գիտա-հետազոտական և նախագծային կազմակերպությունների հետ համատեղ, որոշ աշխատանք են կատարել, նոր, ավելի կատարելագործված սարքավորման ու շինվածքների ստեղծման և դրանց արդյունաբերական յուրացման գծով:

Հայէլեկտրագործարանում՝ յուրացվել են I և II գաբարիտների ՏՎՄ տիպի ուժային տրանսֆորմատորների նոր կոնստրուկցիաներ, ենթապի սինխրոն գեներատորներ՝ 30 և 50 կվտ կարողությամբ, կոմպլեկտային տրանսֆորմատորային ենթակայաններ՝ ԿՊՏ 100/10 և ԿՊՏ 50/10: Հայէլեկտրագործարանի գիտա-հետազոտական ինստիտուտի ֆիլիալը մշակել ու պատրաստել է սինխրոն գեներատորների ու շարժիչների նոր սերիայի փորձնական նմուշներ՝ սելենային համուզդիչներով, բարձր հաճախականության փոխակերպիչներ: Կոնստրուկցիաների առավելություններն են՝ կշռի գգալի նվազումը, ավելի բարձր էլեկտրատեխնիկական ցուցանիշները, կոնստրուկցիաների տեխնոլոգիականությունը, որը հնարավորություն է տալիս մեքենայացնել արտադրությունը:

Երևանի կարելի գործարանի աշխատողների շահնքերով մշակված է անկիզելի մեկուսացումով լարերի նոր կոնստրուկցիա, որի հիմքում դրված է «անհրիտ» կառլշուկի կիրառությամբ ուղեկցում:

Ֆ. է. Զերժինսկու անվան հաստոցաշինական գործարանում մեքենայացված հոսքային գլուծերի, գետալները տեղադրելու և հանելու համար արագագործ հիդրավլիկ հարմարանքներ ունեցող բարձր արտադրողական ագրեգատային հաստոցների արմատավորմը 1Բ-61 խառատապտուտակահան հաստոցի ինքնարժեքն իշեցրել է 34,7%-ով, և նրա պատրաստման ժամանակը կրճատել 19,6% -ով: 1958 թ. հավաքման տեղամասում քայլող կոնվեյերի գործարկումը առաջ կբերի գժվարին աշխատանքների հետագա կրճատում և թողարկվող հաստոցների ինքնարժեքի իշեցում:

Ժողովրդական տնտեսության մեջ մեծ շափով կիրառվելու են երևանի փոքր հիդրոտուրինների գործարանում կառուցված միարգույնավերը:

Մեսպուբլիկայի ժողովնախորհի՝ շինանյութեր արտադրող ձեռնարկությունների տեխնիկական հագեցվածության աճը վերջին տարիներում հնարավորություն է տվել զգալիորեն բարձրացնել արտադրության հիմնական աշխատատար պրոցեսների մեքենայացման մակարդակը:

Սակայն, ընակարանային ու արդյունաբերական շինարարության տարեցտարի ընդարձակվող ծավալը պահանջում է ավելացնել շինարարական նյութերի արտադրությունը: Ժողովրդական տընտեսության զարգացման յոթնամյա պլանով նախատեսվում է այդ նյութերի ծավալը մեծացնել 2—3 անգամ: Այդքան մեծ քանակությամբ նյութերի թողարկումը հնարավոր է միայն նոր տեխնիկայի հիման վրա:

Պրոցեսների մեքենայացման գծով զգալի աշխատանք է կատարվել Հայաստանի ժողությունուների ձուլման ցեխներում: Միայն Հայէլեկտրագործարանում, կոնվեյերներ տեղադրելու և կաղապարման աշխատանքները մերենայացնելու միջոցով, միևնույն արտադրական տարածությունների վրա 1958 թ. ձուլվածքի թողարկումը ավելացել է 18%-ով, անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ:

Ցոթնամյակում մեքենաշինական և էլեկտրամեքենաշինական արդյունաբերության աճման նախատեսվող տեմպի առնչությամբ ժողությունուներու ձեռնարկություններում չուզունի ձուլվածքի պահանջը կամ 3,5 անգամ: Ուստի, մեր տնտեսական շրջանի համար ձուլման ավտոմատացման հարցերը չափազանց ակտուալ են հանդիսանում:

Խնդիրը կարելի է հաջողությամբ իրագործվել միայն այն դեպքում, եթե ժողունտխորհի գորեթե բոլոր մետաղամշակման ձեռնարկություններում ցրված 12 փոքրիկ ձուլարանների փոխարեն ըստեղծվի ժամանակակից տեխնիկայով հագեցված մետաղաձուլական արտադրություն:

Այս խնդիրը լուծելու համար կընդարձակվի Հայէլեկտրագործարանի ձուլման ցեխը և կկառուցվեն երկու կենտրոնական ձուլարաններ՝ Լուսավանում (գործարանների երեսնի խմբի համար) և Լենինականում (գործարանների Լենինականի ու Կիրովականի խմբերի համար):

Ուստապութիկայի արդյունաբերության զարգացման գործում հատուկ տեղ է գրավում սարքաշինությունը: Հայաստանի տնտեսական վարչական շրջանում արդյունաբերության այդ ճյուղը դարգացման մեծ հեռանկար ունի: Վերջին տարիների ընթացքում կառուցվել են սարքաշինական մի քանի գործարաններ, որոնցից երեսնի

ուելեների գործարանը և կիրովականի «Ավտոմատիկա» գործարանը մինչև ընթացիկ տարվա վերջը կտան իրենց առաջին արտադրանքը:

Մինչև այժմ սարքաշինական ձեռնարկությունները չեին արտադրում պրոցեսների ավտոմատիկ կառավարման գործիքներ, ցուցմունքների դիտանցիոն հաղորդման գործիքներ, պայթյունաանվտանգ կատարումով գործիքներ: Այս տարի առաջին կարգավորող գործիքները կյուրացվեն կիրովականի «Ավտոմատիկա» գործարանում: Հետագայում նախատեսվում է մեծացնել թողարկությունը գործիքների նոմենկատուրան, լայնորեն կիրառելով դրանք էլեկտրոնիկայի և կիսահաղորդիչային տեխնիկայի սխեմաներում:

Նախատեսվում է նաև թողարկել կարգավորող գործիքների կոմպլեկտը՝ գործադիր մեխանիզմներով ու արմատուրայով ավտոմատիկ կարգավորման համար, որը զգալիորեն կհեշտացնի արտադրական պրոցեսների ավտոմատացումը:

Հայաստանի արդյունաբերության բազմացրությին բնույթը լավ բազա կարող է ծառայել արտադրական պայմաններում ավտոմատիկայի այն գործիքների փորձարկման համար, որոնք պատրաստվում են կամ նախատեսվում է թողարկել ուսպուրիկայի ձեռնարկություններում:

Ուստապութիկայի արդյունաբերության համար կարուրական պրոցեսի համար լայն հեռանըկարներ բացեց ՍՄԿՊ կենտկոմի Մայիսյան պլենումի որոշումը՝ «Բնակչության պահանջմունքները և ժողովրդական տնտեսության կարիքները ռավարաբեկ համար քիմիական արդյունաբերության և առանձնապես սինթետիկ նյութերի ու դրանցից պատրաստված առարկաների արտադրության զարգացումն արագացնելու մասին»:

Ուստապութիկայի քիմիական արդյունաբերության կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանում է ացետիլենի վերամշակման վրա հիմնըված օրգանական սինթեզի ձեռնարկությունների ընդլայնումը:

Ացետիլենի արտադրման համար բնական գազի նախատեսվող կիրառումը հնարավորություն կտա իշեցնելու էլեկտրաէներգիայի ծախսման տեսակարար նորմաները և ավելի քան երկու անգամ իշեցնելու ացետիլենի ինֆնարեժեքը:

Նոր տեխնոլոգիան հնարավորություն կտա ստեղծելու տեխնիկայի ժամանակակից մակար-

դակին համապատասխանող ացետիլենի ավտոմատացված արտադրություն, ներկայումս ֆիզիկական ծանր աշխատանքի կիրառությամբ կալցիումի կարբիդից ստացվող ացետիլենի գործող արտադրության փոխարժեն:

Օրգանական սինթեզի արդյունաբերության անհետաձգելի խնդիրներից մեկը հանդիսանում է ունիվերսալ նշանակություն ունեցող պլաստիկ և այլ զանազան հատուկ տեսակի խեժերի արտադրության համար կիսապրոդուկտների լայն ասորտիմենտի թողարկումը:

Կառլուկի և վինիլացետատի գործող արտադրության վերակառուցումն ու ընդարձակումը հընարավորություն կտա, պոլիմերացման ու ռեկտիֆիկացման գործող պարբերական պրոցեսների փոխարեն, իրագործել պրոցեսների կոմպլեքսային ավտոմատացումն ապահովող անընդհատ սիստեմա:

Յթինամյա պլանով նախատեսված քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների նոր պրոդուկտների թողարկումը (պոլիթրովինիլային խեժեր, վինիֆիլեքս, մելամին, սինթետիկ կորունդ, ացետատային մետաքս, կապրոնի կորոն, նատրիումի և կալցիումի մետասիլիկատներ, քիմիապես մաքուր սիլիկառող) լայն կիրառություն կտնի սարքաշինական, կիսահաղորդիչային, մեքենաշինական, էլեկտրատեխնիկական ու արդյունաբերության մյուս ճյուղերում և կապահովի թողարկում մեքենաների ու շինվածքների հետագա կատարելագործումը:

Արտադրության մեքենայացման ու ավտոմատացման գծով որոշակի աշխատանք է տարվել ժողովներում սննդի արդյունաբերության ձեռնարկություններում: Շահագործման են հանձնրված տոմատամածուկի ու մրգահյութերի ավտոմատիկ լցիւներ, հանքաջղերի ու կաթի լցման-ծրարման գծեր: Աշխատանքներ են տարվել թեթև արդյունաբերության կոնվեյերացման ուղղությամբ:

1958 թ. ժողովներում ձեռնարկություններում մեքենայացման ու ավտոմատացման միջոցառումների հաշվին սպասավոր տնտեսումը կը կազմի 18 մլն. ռուբլի:

Սակայն, կատարված աշխատանքը հիմնականում հանգում է առանձին արտադրական հանգույցների մեքենայացման ու ավտոմատացման.

Դա բավարար համարվել չի կարող, քանի որ ձեռքի աշխատանքը, հատկապես, օժանդակ օպերացիաներում, դեռևս բավական մեծ տոկոս է կազմում: Շատ պրոցեսներ կատարվում են հընացած տեխնոլոգիայով, գործարաններում տեղադրված սարքավորման մի մասը ցածր արտադրողականություն տնի, բարոյապես մաշված է: Ձեռնարկությունների վերակառուցման ու նորերի կառուցման ժամանակ անբավարար են կիրառվում գիտության և տեխնիկայի նվաճումները:

ՍՄԿՊ կենտրոնական կոմիտեն արդյունաբերության աշխատողների առաջ խնդիր է դրել՝ առանձին ագրեգատների ու օպերացիաների ավտոմատացումից անցնել ցեխերի, տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացմանը և ավտոմատացված ձեռնարկությունների ստեղծմանը: Սակայն, այդ գրությը ամենեին էլ չի բացառում արտադրության առանձին ագրեգատների և հանգույցների հետագա մասնակի մեքենայացման ու ավտոմատացման խնդրաժեշտությունը: Կոմպակտիվային մեքենայացման իրագործումը նպատակահարմար է այնտեղ, որտեղ դա տնտեսապես շահավետ է: Այդ պատճառով, կոմպլիքսային մեքենայացման իրագործման հետ մեկտեղ, պետք է առօրյա աշխատանք տարվի նաև մասնակի մեքենայացման գծով:

Անհրաժեշտ է, որպեսզի ռեսպուբլիկայի ավտոմատացված ու բարձր արտադրողական սարքավորումով հագեցված, կառուցվող և վերակառուցությունները թողարկեն ժամանակակից բարձր արտադրողական սարքավորում, ավտոմատիկայի նորագույն միջոցները:

Այս հանգամանքը մեծ նշանակություն է ձեռքբերում նաև այն պատճառով, որ ռեսպուբլիկայի արտադրության զարգացման յոթնամյա հեռանկարային պլանով հաստոցաշխնության աճը նախատեսվում է 6,9, էլեկտրատեխնիկական արդյունաբերության՝ 2,9, սարքաշինության՝ 4,5, քիմիական արդյունաբերության՝ 3,2 և գունավոր մետալուրգիային՝ 2,8 անգամ:

ՍՄԿՊ կենտրոնի և ՍՄՆՄ Մինիստրների Սովետի կողմից անցկացված Մայիսյան խորհրդակցության միջոցառումները՝ արտադրական պրոցեսների մեքենայացման և ավտոմատացման հարցերի վերաբերյալ, ինչպես նաև արդյունա-

բերական ձեռնարկություններում, նախագծման և կոնստրուկտորական բաժիններում ընդունված հանձնարարականների քննարկության նյութերի ընդհանրացումը, Հայկ. ՍՍՌ Ժողովնախորհին հնարավորություն տվեցին մշակելու ուսապուրիկայի արդյունաբերության հետագա տեխնիկական պրոգրեսի ծրագիրը:

Ժողովրդական տնտեսության խորհրդի կողմից միջոցներ են ձեռք առնվել գոյություն ունեցող նախագծային ու հետազոտական ինստիտուտները, կոնստրուկտորական բյուրոները և վերահսկչափիչ գործիքների ցեխերը ընդլայնելու և նորերը ստեղծելու ուղղությամբ:

Ընդլայնվել է «Հայէլեկտրագործարանի» գիտա-հետողատական ինստիտուտի ֆիլիալը և կաբելի, էլեկտրալամպերի, «Էլեկտրոտուշպրիբոր» և կոմպրեսորների գործարաններին կից ստեղծվել են նրա առանձին խմբերը. նրանք այդ գործարանների աշխատողների հետ միասին մշակում են այդ ձեռնարկությունների արտադրանքի նոր կոնստրուկցիաներ և մասնակցում փորձնական նմուշներ պատրաստելու գործին:

Մասնավորապես, կոմպրեսորների գործարանին կից խումբը, գործարանի աշխատողների հետ միասին, մշակում և փորձարկում է ազատ-մըխոցային դիգել-կոմպրեսորի փորձնական նըմուշը, որը մեծ ապագա ունի մեր արդյունաբերության մեջ:

Նոր հաստոցների ու մեքենաների մշակման համար ստեղծվել է Մեքենաշինության և հաստոցաշինության մասնավիտացված կոնստրուկտորական բյուրո: Լենինականում ընդլայնվում է «Պրոմպրիբոր» ՄԿԲ-ն, որը զբաղվում է վիսկոզիմետրների ու խոնավաշախների նոր կոնստրուկցիաների ստեղծմամբ: «Ավտոմատիկա» ՄԿԲ-ին կից ստեղծված է փորձնական բազա, որտեղ փորձարկում են կառուցված գործադիր մեխանիզմները: Սարքաշինական և մեքենաշինական գործարաններում ընդարձակվում և նորից ստեղծվում են տեխնոլոգիական ու կոնստրուկտորական բաժիններ: Կազմակերպվել է Լեռնա-մետալուրգիական ինստիտուտը՝ Ալավերդում գտնվող ֆիլիալով, որը կոչված է մշակելու ուսապուրիկայի բնական հարստությունների կոմպլեքսային օգտագործման հարցերը և կատարեագործելու լեռնահանքային արդյունաբերության

ու գումավոր մետալուրգիայի ձեռնարկությունների արտադրությունը:

Կառւուկի հատուկ տեսակների մշակման ու փորձարկման համար գիտա-հետազոտական ու փորձնական աշխատանքների տեմպերն արագացնելու նպատակով, վերադաս մարմինների որոշմամբ, ուսապուրիկայում ստեղծվել է ՎՆԻԻՍԿ-ի (Սինթետիկ կառւուկի համամիութենական գիտա-հետազոտական ինստիտուտի) ֆիլիալ:

Կիրովականում կազմակերպվում է նախագրծային և գիտա-հետազոտական ինստիտուտ՝ իր փորձնական բազայով, որը զբաղվելու է արտադրությունների տեխնոլոգիայի գիտա-հետազոտական և լաբորատորական մշակմամբ և կառուցվող ձեռնարկություններն ապահովելու է տեխնիկական դոկումենտացիայով:

Լրացուցիչ կերպով ստեղծվում և զգալիորեն ընդարձակվում են երևանի ավտոդողերի գործարանի, կիրովականի քիմկոմբինատի և «Պոլիվինիլացետատ» գործարանի լաբորատորիաները:

Հետազոտական և նախագծային աշխատանքներին մասնակից կդարձվի ՍՍՌՄ Պետպլանի՝ քիմիական արդյունաբերության և գումավոր մետալուրգիայի ավտոմատացման կիրովականի ինստիտուտը:

Այսպիսով, ուսապուրիկայի արդյունաբերության տեխնիկական պրոգրեսի հետագա զարգացման պրոբլեմների մշակմամբ զբաղվող գիտա-հետազոտական կազմակերպություններից շատերը նոր են կազմակերպվել: Հետազոտական աշխատանքներում ներգրավվում են մեծ թվով մարդիկ, որոնք գիտա-հետազոտական աշխատանքի փորձ չունեն, ուստի անհրաժեշտ է, ըստ հնարավորին, կարճ ժամանակում կազմակերպել և ճիշտ ղեկավարել նրանց աշխատանքը: Անհրաժեշտ է նպատակաւոր ուղղություն տալ այն հետազոտական ու փորձնական աշխատանքներին, որոնք տարվում են գիտական կազմակերպություններում ու գործարանային լաբորատորիաներում, պետք է խստորեն կոորդինացնել նրանց աշխատանքը, մշտական կապ հաստատել մյուս տնտեսական շրջանների նախագծային ու հետազոտական ինստիտուտների հետ:

Նախագծային և հետազոտական ինստիտուտ-

ներում աշխատանքը պետք է կազմակերպել այն-պես, որպեսզի պրոբլեմների ու կոնստրուկցիա-ների մշակումը չձգձգվի տարիներով, ամեն մի անցկացվող վերակառուցում, ավտոմատացում տնտեսապես հիմնավորված լինի, ծառայի աշխա-տանքը թեթևացնելու նպատակներին ու նպաստի ժողովրդի նյութական բարեկեցության հետագա-րարելավմանը։ Պրոբլեմներ մշակելիս պետք է հաշվի առնվեն արտադրության նորարարների

կողմից մտցվող արժեքավոր առաջարկություն-ները։

Գործարանների ու ֆաբրիկաների, հետազո-ւական ու նախագծային կազմակերպություննե-րի աշխատողների համատեղ նպատակասլաց աշխատանքը՝ արդյունաբերության արագացրած տեխնիկական պրոգրեսի արագացման, ժողովր-դական տնտեսության հետագա զարգացման ծր-րագրի կատարման գրավականն է։